



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N ՄՐ/ԵԳ-2020  
.. 15 .. 04 2020թ.

ք. Արտաշատ

### ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՈՂ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սարգիս Սարգսյանի՝ իր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանման մեջ «Արարատ» բառը օգտագործելու թույլտվություն տալու մասին դիմումը և ղեկավարվելով «Ֆիրմային անվանումների մեջ տարբերակող նշանակության անուններում «հայ», «Հայաստան», «հայկական» բառերը և դրանց թարգմանությունները, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների անվանումները, ինչպես նաև ֆիրմային անվանումների մեջ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը՝ նրա մահվան և ժառանգներ չունենալու դեպքում, օգտագործելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 7-ի N 289 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 8 նոյեմբերի 2012 թվականի թիվ 1617-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետով,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

Թույլատրել Սարգիս Սարգսյանին իր «Արարատ Պրոդուկտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանման մեջ օգտագործել «Արարատ» բառը:

15.04.2020

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN GARIK 2811870695

Գ. ՍԱՐԳՍՅԱՆ